ՈՒՂԵՑՈՒՅՑ

Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի մասնակից աշակերտների գրանցման համար

Հարգելի գործընկերներ,

Տեղեկացնում ենք, որ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ի (www.emis.am) «Էլեկտրոնային մատյան» բաժնում հնարավորություն է ստեղծվել գրանցելու առարկայական օլիմպիադաներին մասնակցել ցանկացող աշակերտներին: Գրանցումը կարող են կատարել կրթօջախների վարչական լիազորությամբ /տնօրեն, փոխտնօրեն, գործավար և այլն/ օժտված աշխատակիցները:

Ուղեցույցում նկարագրումները կատարվել են ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի փոխտնօրեն Անժելա Նազարեթյանի մասնակցությամբ, ով միաժամանակ դասավանդում է «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաները: Գրանցումը կատարվել է 9ա դասարանի աշակերտ Գրիգորյան Լիանայի համար, ով ցանկություն է հայտնել մասնակցելու «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» և «Ինֆորմատիկա» առարկաներից:

Մուտք գործենք «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ի (www.emis.am) «**Էլեկտրոնային մատյան**» բաժնը /նկար 1, 1-ին հղում/:



Նկար 1

Նկար 2-ում բերված պատկերի համաձայն մուտքագրել **Օգտանունը** (1-ին դաշտ), **Գաղտնաբառը** (2-րդ դաշտ) և կատարել **ՄՈՒՏՔ** հրամանը (3-րդ հղումը):



Նկար 2

Բացված պատուհանում (նկար 3) կատարել 1-ին դերին (**Վարչական լիազորություն**) համապատասխան **ԸՆՏՐԵԼ** (2-րդ հղում) հրամանը:

Նկար 3

Բացված պատուհանում (նկար 4) անցնել **Գլխավոր էջ** (1-ին հղում) և բացել **ԴԱՍԱՐԱՆՆԵՐ** բաժինը (2-րդ հղում):



Նկար 4

Դասարանների ցանկից ընտրենք 9ա դասարանը և բացենք **Աշակերտների** ցուցակը նկար 5-ում բերված 1-ին հղման օգնությամբ:

Նկար 5

Աշակերտների ցուցակից անցնենք Գրիգորյանի Լիանայի տվյալների տող /նկար 6/ և բացենք **Օլիմպիադա** բաժինը /1-ին հղում/:



Նկար 6

Օլիմպիադա բաժնում /նկար 7/ բացենք Առարկաներ ցուցակը և քառակուսի վանդակները նշելու օգնությամբ ընտրենք «**Մաթեմատիկա**» /1-ին նշիչ/, «**Ֆիզիկա**» /2-րդ նշիչ/, «**Աշխարհագրություն**» /3-րդ նշիչ/ և «**Ինֆորմատիկա**» /4-րդ նշիչ/ առարկաները, այնուհետև կատարել **ԱՎԵԼԱՑՆԵԼ** հրամանը /5-րդ հղում/:



Նկար 7

Անհրաժեշտության դեպքում Օլիմպիադա բաժնում կարելի է խմբագրել /նկար 8/ օլիմպիադաներին աշակերտի մասնակցության թիվը /ավելացնել կամ հեռացնել առարկաներ, **1**-ին կամ **2**-րդ հրամաններ/: Խմբագրելուց հետո կատարել **ԽՄԲԱԳՐԵԼ** հրամանը /3-րդ հղում/:



Նկար 8

Գործողությունը կատարվելուց հետո կատարել նկար 9-ում նշված **OK** հրամանը /1-ին հղում/:



Նկար 9

Աշխատանքը ավարտել «Էլեկտրոնային մատյանից» դուրս գալու օգնությամբ /նկար 10/ բացելով **ՎԱՐՉԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ** ընտրանին 1-ին հղման օգնությամբ և կատարելով **Դուրս գալ** հրամանը /2-րդ հղում/:



Նկար 10

Ուղեցույցը կազմեց Դավիթ Մինասյանը